**ՏԵՂԵԿԱՆՔ**
**ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ**
**«ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ~~ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ~~ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1**. «Պետական տուրքի մասին» 1997 դեկտեմբերի 27-ի ՀՕ-186 ՀՀ օրենքի (այսուհետ՝Օրենքի) 19.7 հոդվածի 11-րդ մասում ~~շարադրել նոր խմբագրությամբ.~~

«11. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված՝ միջմարզային, ներմարզային, ներքաղաքային երթուղու շահագործման համար պետական տուրքի հաշվարկման նպատակով հիմք է ընդունվում տվյալ ամսվա ընթացքում տվյալ երթուղու սպասարկման նպատակով շահագործվող ավտոբուսների կամ միկրոավտոբուսների քանակը՝բացառությամբ պահուստային տրանսպորտային միջոցների: Ընդ որում, պետական տուրքի հաշվարկման նպատակով ավտոբուսների կամ միկրոավտոբուսների քանակը չի կարող պակաս լինել տվյալ երթուղու սպասարկման համար անհրաժեշտ ավտոբուսների կամ միկրոավտոբուսների (բացառությամբ՝ պահուստային տրանսպորտային միջոցների) քանակից:»

~~**Հոդված 2.** Օրենքի 29-րդ հոդվածում 4-րդ պարբերությունից հետո լրացնել նոր պարբերություն.~~

~~«Կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը ազատվում են միջմարզային, ներմարզային, ներքաղաքային երթուղու շահագործման կամ ավտոբուսներով (միկրոավտոբուսներով) ուղևորափոխադրումների կազմակերպման համար վճարվող պետական տուրքի վճարումից՝ պահուստային տրանսպորտային միջոցների մասով:»~~

**Հոդված 2~~3~~.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: